ԿԱՐԾԻՔ

Զավեն Սմբատյանի «Վարչական ակտի արդյունավետության գնահատման իրավական հիմնախնդիրները. վարչաիրավական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Զավեն Սմբատյանի «Վարչական ակտի արդյունավետության գնահատման իրավական հիմնախնդիրները. վարչաիրավական հետազոտություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությամբ բարձրացված խնդիրներն արդիական են:

Հեղինակն աշխատանքի ներածությունում հիմնավորում է թեմայի արդիականությունը, սահմանում է ատենախոսության նպատակներն ու խնդիրները, ստացվող արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ներկայացնում թեմային առնչվող մասնագիտական գրականությունն ու ատենախոսության նորմատիվ, փորձառնական և մեթոդաբանական հիմքերը:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ ատենախոսն առաջին անգամ վարչական իրավունքի գիտության զարգացման գործընթացում կատարել է հետազոտություն տարբեր երկրների վարչական իրավունքի՝ ատենախոսության բովանդակությունը ներառող ինստիտուտների վերաբերյալ, ամփոփել տվյալ ինստիտուտների վարչական և դատական կիրառման և մեկնաբանման միջազգային և ներպետական պրակտիկան, որի հիման վրա առաջարկվել են հայեցակարգեր թե՛ հասկացությունների ու ձևակերպումների, և թե՛ օրենսդրական ամրագրումների մակարդակով:

Աշխատանքի առաջին՝ «Վարչական ակտի սահմանման իրավական բնույթը» վերտառությամբ գլխում հեղինակն անդրադարձել է ինստիտուտի ձևավորման պատմական ակունքներին ու վարչական ակտի հասկացության ձևավորման պատմական հիմքերին, վերհանել վարչական ակտի հասկացության սահմանման տեսական-իրավական հիմնահարցերը, կատարել համապատասխան դատողություններ:

Ատենախոսության երկրորդ՝ «Վարչական ակտի արդյունավետության գնահատման հիմնախնդիրները» վերտառությամբ գլխում քննարկվում են արդյունավետության գնահատման տարրերը, բացահայտվում է վարչական ակտի իրավաչափության գնահատման հայեցակարգը,

դրա դերն ու նշանակությունը, քննարկվում են վարչական ակտի ուժի մեջ մտնելու, իրավական հետևանք առաջացնելու իրավակարգավորումներն ու դրանցից բխող իրավական հետևանքները:

Ատենախոսության երրորդ՝ «Վարչական ակտը ներպետական իրավական համակարգում. օրենսդրական բացերի հիմնախնդիրները» վերտառությամբ գլխում հեղինակը վերհանել է վարչական ակտի ինստիտուտը կանոնակարգող իրավական համակարգում առկա բացերը, իրավական հակասությունները, առաջարկվում են դրանց հաղթահարման լուծումներ:

Այդուհանդերձ, առկա են որոշակի նկատառումներ, որոնք հաշվի առնելու պարագայում, մեր կարծիքով կբարձրանա աշխատանքի գիտական և գործնական արժեքը: Այսպես:

1. Հեղինակը որպես պաշտպանության ներկայացվող առաջին դրույթ առաջ է քաշել վարչական ակտի իր հեղինակային սահմանումը, ըստ որի՝ վարչաիրավական ակտը սահմանված ձևին համապատասխան ընդունված, արտաքին դրսևորմամբ, կարգավորող ազդեցությամբ, անհատական իրավական ակտ է, որն ընդունվում է վարչական մարմնի կամ վարչական մարմնի անունից վարչական ակտ ընդունելու իրավասությամբ օժտված սուբյեկտի կողմից՝ վերջինիս լիազորությունների իրականացման ընթացքում, կոնկրետ անձի (անձանց խմբի) համար իրավունքների, իրավական կարգավիճակի կամ պարտականությունների սահմանման, փոփոխման, հաստատման, կամ դադարեցման նպատակով, ինչպես նաև կարող է ուղղված լինել այդպիսի իրավական հետևանքներ առաջացնելուն: Օրենսդիրը վարչական ակտը սահմանել է որպես արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Այս առումով առնվազն հասկանալի չէ, թե հեղինակը, ներկայացնելով վարչական ակտի իր յուրովի մեկնաբանությունը, ինչպիսի նոր հատկանիշներ է հաղորդել վարչական ակտի էությանը, որոնք կդիտվեին որպես գիտական նորամուծություն՝ դարձնելով այն պաշտպանության ներկայացվող դրույթ:

2. Պաշտպանության ներկայացվող դրույթներում բարձրացնելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի հարցը և ամրապնդելով այն միտքը, որ վարչական ակտն իրավաչափ է այնքան ժամանակ, քանի դեռ այն չի ճանաչվել ոչ իրավաչափ կամ անվավեր,

հեղինակն ըստ էության հակասություն է առաջացրել հետագա իր դատողություններում առ այն, որ վարչական ակտի հիմնավորումը պետք է դիտել որպես վարչական մարմինների հայեցողական լիազորություն: Կարծում ենք, որ այդպիսի լիազորության դասակարգումը վարչական մարմնի հայեցողական լիազորությունների շարքին գործնականում կարող է խոցելի դարձնել վարչական ակտի հիմնավորվածության հարցը:

3. Հեղինակը ատենախոսության մեջ քննարկվելով վարչական ակտի առ ոչինչության հարցը, բավականաչափ հիմնավոր պատճառաբանությամբ և խորությամբ այդուհանդերձ չի կարողացել վերլուծել, թե ի վերջո ինչպես է ակտի առ ոչինչությունը դառնում վարչական մարմնի կողմից ընդունվող վարչական ակտի իրավական տրամաբանությանը, բարոյականության չափանիշներին հակասելու իրավական հետևանք:

Չնայած վերոգրյալ նկատառումներին՝ կարծում ենք, որ Զավեն Սմբատյանի «Վարչական ակտի արդյունավետության գնահատման իրավական հիմնախնդիրները. վարչաիրավական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի պահանջներին:

Ատենախոսության հեղինակ Զավեն Սմբատյանին կարող է շնորհվել ԺԲ.00.02-«Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝

իրավաբանական գիտությունների թեկնածու _____ **Սիմա Իսկանդարյան**

Սիմա Իսկանդարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀԵՀ գիտական քարտուղար, իրավաբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ _____ **Վահե Թորոսյան**